ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Ե/40/2633-21 առ «04» 10 2021թ.

Ձեր №007 առ "29" սեպտեմբեր 2021թ.

**«ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ տնօրեն**
**Պրն Է.Մարտիրոսյանին**

(Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ)

***Հարգելի պարոն Մարտիրոսյան,***

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) կարիքների համար տուրբինային արտադրամասի թիվ 1÷4 դրենաժային բաքերի ներքին մակերևույթի հակակոռոզիոն շերտապատում ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) մատուցման նպատակով «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. օգոստոսի 12-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-34/21-03/53 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի արդյունքում Ձեր կազմակերպությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված ժամկետում մատուցել վերոնշյալ ծառայությունը՝ 977 000 (ինը հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Համաձայն պայմանագրի 2.1.1 կետի Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել մատուցվող ծառայության որակը, ինչը և կատարել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն՝ ստուգելով Ձեր կողմից ներկայացված նյութի որակը, որը նախատեսում էիք կիրառել ծառայության մատուցման ժամանակ:

Տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից պարբերաբար ներկայացվել են օգտագործվող նյութի (ГИПК-1100ПК) փորձանմուշներ, որոնք փորձաքննության արդյունքում ստացել են բացասական եզրակացություններ, իսկ եզրակացությունների արդյունքների ներկայացման պահանջ ՀԱԷԿ-ը չի ստացել, նաև Ձեր կողմից չի ստացվել առարկություններ փորձաքննության արդյունքների վերաբերյալ:

Համաձայն Պայմանագրի Հավելված 1-ի Ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել «ծառայության մատուցման ավարտը՝ մինչև 02.10.2021թ.»:

Համաձայն կողմերի միջև կնքված Պայմանագրի՝

- 1.1 կետի - «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ ստանձնել է տուրբինային արտադրամասի թիվ 1÷4 դրենաժային բաքերի ներքին մակերևույթի հակակոռոզիոն շերտապատում ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների,
- 2.1.3 կետի - Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:
- 2.4.1 կետ - Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:
- 2.4.2 կետ - Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
- 5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:
- 7.1 կետով սահմանված է «Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից ...»:
- 7.6 կետով սահմանված է «Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ»: Ձեր կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն չի ստացել ժամկետի երկարացման վերաբերյալ գրություն:
- 7.8 կետով սահմանված է «Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ...»: Հետևաբար ս/թ սեպտեմբերի 30-ին «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ից ստացված թիվ 007 առ 29.09.2021թ գրությամբ ներկայացվող առաջարկը չի կարող ընդունելի լինել ՀԱԷԿ ՓԲԸ-ի համար:

Հայտնում ենք Ձեզ, որ հիմք ընդունելով Պայմանագրի վերը նշված դրույթները «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԷԼԴԻՆԱ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև ս/թ օգոստոսի 12-ին կնքված թիվ ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-34/21-03/53 պայմանագիրը:

Հարգանքով՝

**Գլխավոր տնօրեն** **Է.Մարտիրոսյան**

Կազմեց. ԳԸԲ
Հեռախոս՝ +374 10 20 04 91